Իսկ ի՞նչ վերաբերում ունէին դէպի թիւրքական յարձակումը դաշնակիցները։ Դեռ օգոստ. 8-ին, Հայաստանի կառավարութիւնը շրջաբերական յայտագիր էր ուղղել բոլոր դաշնակից պետութիւնների կովկասեան ներկայացուցիչներին՝ ցոյց տալով, որ քեմալականները ձգտում են Հայաստանի վրայով միանալ բոլշևիկների հետ և նրանց օգնութեամբ շարունակել պայքարը դաշնակիցների դէմ։ Հայաստանի կառավարութիւնը փաստերով հաստատել էր, որ բոլշևիկներն ու քեմալականները Ադրբէջանն ու Պարսկաստանը դարձնում են իրենց անմիջական գործունէութեան վայր և որ բոլշևիկ համիսլամական-համաթիւրքական ծովի մէջ միայն Հայաստանն է մնացել մի փոքրիկ օազիս, որը հեշտութեամբ ոտքի տակ կերթայ, եթէ դաշնակիցներից լուրջ օգնութիւն չստանայ։ Ոչ մի շօշափելի օգնութիւն չստացաց դաշնակիցներից, եթէ չհաշուենք Անգլիայի ծախած մէկ միլիոն ոսկու ռազմամթերքն ու զինուորական հագուստը։ Պատերազմը սկսելուց յետոյ, Հայաստանի կառավարութիւնը նորից դիմեց դաշնակիցներին։ Պատասխանը եղաւ նոյնը. համակրական խօսքեր և ոչ մի գործնական օգնութիւն։

Այսպիսի պայմաններում սկսւեց թիւրք-հայկական պատերազմը. Հայաստանը բառիս բուն նշանակութեամբ մնացել էր մենակ։ Նա բոլորովին պատրաստ չէր այդ պատերազմին։ Դեռ նոր էր դուրս եկել ներքին քաղաքացիական կռիւների շրջանից։ Մայիսեան բոլշևիկեան շարժումները կազմալուծել էին նրա բանակը. թիւրքական շրջանների նուաճման գործողութիւնները աւելի ևս թուլացրել էին երկրի մարտական ուժերը։ Ադրբէջանը նաւթ չէր տալիս և Հայաստանի երկաթուղին հազիւ շունչ էր քաշում։ Բոլշևիկեան յարձակումները Ղազախի, Բասարգեչարի, Դարալագեազի և Շարուրի շրջաններում անընդհատ ջղային վիճակի մէջ էին պահում Հայաստանը և ստիպում, որ հայկական զօրքերը մնան ցրուած վիճակի մէջ։ Բացի այդ, ժողովուրդը դրաղուած էր բերքը հաւաքելով. անձրևոտ եղանակի պատճառով հունձքը վերջացաւ ուշ և ամէն ոք չտապում էր կալսել ու պատրաստել իր ձմեռայ պաշարը։ Զինուորական իշխանութիւնը թոյլ էր տալիս, որ բանակի զինուորների մի մասը դնայ տուն դաշտային աշխատանքներ կատարելու համար։ Թիւրքերի ընդհանուր յարձակումը յանկարծակիի բերեց հայկական բարձր հրամանատարութեան։ Ամբողջ ճակատի վրա, Սուրմալուից մինչև Օլթի, հայկական ուժերի թիւը թեւ հազարը չէր անցնում, որից շուրջ 2500 Սուրմալուում, մնացածը՝ Կարսի ճակատի վրա։

Իսկ ի՞նչ ոյժ ունէին թիւրքերը, Հայաստանի դէմ պատերազմը սկսելիս։ Համաձայն Հայաստանի սպարապետի սպայակոյտի հետախուզական բաժնի յուլիս 6 տեղեկութեան*) թիւրքական բանակը Հայաստանի սահմանի վրա հետևեալ կերպով էր դասաւորուած. 15րդ կորպուս՝ հրամանատար Քեազիմ Կարաբեքիր փաշա։ Էրզրումում գտնւում էր 17րդ գունդը և 9րդ դիւիզիայի սպայակոյտը — հրամանատար՝ Ռուշտի բէյ։ Հասան Ղալայում գտնւում էր 28րդ գնդի կենտրոնը և չորս լեռնային թնդանօթ. Թորթումում՝

*) Секретная сводка развед. отд. шт. ком войсками Армении 6 июля 1920 г. № 20